## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 մայիսի 2019 թվական թիվ 17

գյուղ Ազատան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանին՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 8-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումն ի գիտություն ընդունելու վերաբերյալ»

2. «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի վարչական սահմանում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 08-004-0143-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0,2000 հեկտար էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, տրանսպորտի գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին»

3. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ու Արցախյան պատերազմի մասնակիցներին աջակցելու և կրթության բնագավառում համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացմանը համաձայնություն տալու մասին»

4. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքային սեփականություն համարվող 08-004-0755-0058 կադաստրային ծածկագրով, 1,01489 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու, օտարման մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին»

5. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ ( 6 ) | Դեմ (__) | Ձեռնպահ (__) |
|---|---|---|---|
| Գևորգ Աբրահամյան | ______________ | ______________ | ______________ |
| Ավետիս Դավթյան | ______________ | ______________ | ______________ |
| Կարապետ Ենգոյան | ______________ | ______________ | ______________ |
| Անդրանիկ Իկիլիկյան | ______________ | ______________ | ______________ |
| Վարդան Մկրտչյան | ______________ | ______________ | ______________ |
| Հմայակ Պողոսյան | ______________ | ______________ | ______________ |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ազատանի համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյան
08 մայիսի 2019 թվական
գյուղ Ազատան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 մայիսի 2019 թվական թիվ 18

գյուղ Ազատան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի ավագանին՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն,՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ ( 6 ) | Դեմ (__) | Ձեռնպահ (__) |
|---|---|---|---|
| Գևորգ Աբրահամյան | | | |
| Ավետիս Դավթյան | | | |
| Կարապետ Ենգոյան | | | |
| Անդրանիկ Իկիլիկյան | | | |
| Վարդան Մկրտչյան | | | |
| Հմայակ Պողոսյան | | | |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ազատանի համայնքի ղեկավար՝
08 մայիսի 2019 թվական
գյուղ Ազատան

Վարդան Իկիլիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 մայիսի 2019 թվական թիվ 19

գյուղ Ազատան

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-004-0143-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,2000 ՀԵԿՏԱՐ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՊԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Գայանե Աշոտի Ավետիսյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանին՝

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմանում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-004-0143-0001 կադաստրային ծածկագրով 0.2000 հեկտար էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունն օրինականացնելու և հողամասի նպատակային ու գործառնկան նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյանին՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողերի օտագործման ժամանակավոր սխեմայով սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ ( 6 ) | Դեմ (__) | Ձեռնպահ (__) |
|---|---|---|---|
| Գևորգ Աբրահամյան | | | |
| Ավետիս Դավթյան | | | |
| Կարապետ Ենգոյան | | | |
| Անդրանիկ Իկիլիկյան | | | |
| Վարդան Մկրտչյան | | | |
| Հմայակ Պողոսյան | | | |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյան

08 մայիսի 2019 թվական
գյուղ Ազատան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

08 մայիսի 2019 թվական թիվ 20 գյուղ Ազատան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՒ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 12-ի թիվ 4-Ն որոշման կարգի 6-րդ, 11-րդ և 16-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և համայնքի բնակիչներից ստացված դիմումները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանին՝

**Ո Ր Ո Շ Ու Մ Է**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավարի սոցիալական աջակցության և կրթության բնագավառներում կամավոր լիազորությունների իրականացման նպատակով համայնքի բյուջեից նպատակային հատկացումներ կատարելու համար.

   1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի բյուջեի բաժին, խումբ, դաս 10-7-1, 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածից սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝

   ա. Հայկուհի Արշակի Գասպարյանին՝ 30000 (երեսուն հազար) դրամ,
   բ. Արփիկ Միշայի Ենգոյանին՝ 30000 (երեսուն հազար) դրամ,
   գ. Անուշ Սուրենի Վալեսյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ,
   դ. Մարինե Գագիկի Սահակյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ,
   ե. Արաքսի Հարությունի Ղուկասյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ,
   զ. Ֆրիդա Կարոյի Ազատյանին՝ 20000 (քսան հազար) դրամ,
   է. Օհաննա Վազգենի Ղազարյանին՝ 30000 (երեսուն հազար) դրամ,

   2) Համայնքի բյուջեի բաժին, խումբ, դաս 10-7-1, 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածից, Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի բնակիչներ, Արցախյան պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքի անդամներին՝

   **ա.** Կարինե Մնացականյանին,
   **բ.** Վլադիկ Ղազարյանին,
   **գ.** Լևոն Իկիլիկյանին,
   **դ.** Վահրիճ Ոսկանյանին,

**ե.** Մեխակ Ճղրիկյանին,
**զ.** Մեխակ ՈՒՆուսյանին,
**է.** Մուշեղ Ճղրիկյանին,
**ը.** Լևոն Եթարյանին,
**թ.** Արտավազդ Դավինյանին,
**ժ.** Հովակիմ Խնձրցյանին,
**ժա.** Բալասան Հարությունյանին,
**ժբ.** Կարապետ Պողոսյանին,
**ժգ.** Սեյրան Առաքելյանին,
**ժդ.** Աիդա Հովհաննիսյանին,
**ժե.** Մկրտիչ Գալոյանին,
**ժզ**. Սամվել Կարապետյանին,
**ժէ**. Հայկ Ոսկանյանին,
**ժը**. Արաիկ Ոսկանյանին,
**ժթ**. Միհրան Ղաբանյանին,
**ի.** Գառնիկ Առաքելյանին,
**իա.** Մխիթար Բաղդասարյանին,
**իբ.** Արսեն Առաքելյանին,
**իգ.** Ջիվան Չարխիֆալաքյանին,
տրամադրել 15000-ական (տասնհինգ հազար) դրամ,
**իդ.** Քառօրյա պատերազմի մասնակից՝ Հովիկ Վարուժանի Սարգսյանին տրամադրել 30000 (երեսուն հազար) դրամ,
**իե.** զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներ՝ Գոհար Մկրտչյանին, Սվետլանա Բաբլումյանին, Հրանուշ Մանուկյանին և Վարդիթեր Նազարեթյանին տրամադրել 30000-ական (երեսուն հազար) դրամ:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի բյուջեի բաժին, խումբ, դաս 1-6-1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն» ծրագրի 4819 «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածից, «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցել 25000 (քսանհինգ հազար) դրամ,

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի բյուջեի բաժին, խումբ, դաս 9-4-1 «Բարձրագույն կրթություն», 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածից, Մետաքսյա Լևոնի Նավոյանի ուսման վարձի դիմաց փոխանցել 60000 (վաթսուն հազար) դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ ( 6 ) | Դեմ (__) | Ձեռնպահ (__) |
|---|---|---|---|
| Գևորգ Աբրահամյան | | | |
| Ավետիս Դավթյան | | | |
| Կարապետ Ենգոյան | | | |
| Անդրանիկ Իկիլիկյան | | | |
| Վարդան Մկրտչյան | | | |
| Հմայակ Պողոսյան | | | |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ազատանի համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյան
08 մայիսի 2019 թվական
գյուղ Ազատան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 մայիսի 2019 թվական թիվ 21-Ն գյուղ Ազատան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 08-004-0755-0058 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1,01489 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի սեփականություն համարվող, 08-004-0755-0058 կադաստրային ծածկագրով, 1,01489 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ գործառնական նշանակությամբ հողամասն արդյունավետ օգտագործելու և պահպանելու նպատակով, դասական աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Օտարման մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար հաստատել կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 26,75 (քսանվեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) դրամ, ընդամենը հողամասի համար՝ 272000 (երկու հարյուր յոթանասուներկու հազար) դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավար Վարդան Իկիլիկյանին առաջարկել՝ հողամասը մեկ լոտով օտարելու նպատակով, կազմակերպել հրապարակային սակարկություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ ( 6 ) | Դեմ (__) | Ձեռնպահ (__) |
|---|---|---|---|
| Գևորգ Աբրահամյան | | | |
| Ավետիս Դավթյան | | | |
| Կարապետ Ենգոյան | | | |
| Անդրանիկ Իկիլիկյան | | | |
| Վարդան Մկրտչյան | | | |
| Համայակ Պողոսյան | | | |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ազատանի համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյան
08 մայիսի 2019 թվական
գյուղ Ազատան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 մայիսի 2019 թվական թիվ 22-Ն գյուղ Ազատան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանին՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Բաժին խումբ, դաս 11-1-2 «Պահուստային միջոցներ» ծրագրի 4891 «Պահուստային ֆոնդ» հոդվածի «9695,8» թվերը փոխարինել «9245,8» թվերով
2. Բաժին, խումբ, դաս 6-4-1 «Փողոցների լուսավորություն» ծրագրի 5134 «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածի «300,0» թվերը փոխարինել «500,0» թվերով
3. Բաժին, խումբ, դաս 4-5-1 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5134 «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածի «300,0» թվերը փոխարինել «550,0» թվերով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ ( 6 ) | Դեմ (__) | Ձեռնպահ (__) |
|---|---|---|---|
| Գևորգ Աբրահամյան | | | |
| Ավետիս Դավթյան | | | |
| Կարապետ Ենգոյան | | | |
| Անդրանիկ Իկիլիկյան | | | |
| Վարդան Մկրտչյան | | | |
| Հմայակ Պողոսյան | | | |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյան

08 մայիսի 2019 թվական

գյուղ Ազատան